ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Նոր ուսումնական տարվանից ԼՂՀ-ում սկսել է գործել հանրակրթական 11 նոր դպրոց: Դրանք Մարտակերտի, Ասկերանի եւ Հադրութի շրջանների դպրոցներն են, որոնք այս շրջանների բոնազավթման ժամանակահատվածում ոչնչացվել էին աղրբեջանական բանակի կողմից: Այս մասին «Նոյյան տապան» գործակալությանը թղթակցին հաղորդել է ԼՂՀ ժողկրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության ժողովրդական կրթության վարչության պետ Մլավիկ Ասրյանը: Վերոհիշյալ դպրոցները, ինչպես նաեւ հանրապետության հանրակրթական այլ հաստատությունները, օրյակփիվ պատճառներով առայժմ չեն ապահովված նոր դասագրքերով: Օրերս հանրապետության դպրոցները պետք է ստանան 10 անուն նոր դասագիրք: Մ.Ասրյանն բեղգծել է, որ հանրապետության հանրակրթական դպրոցները ղեկավարվում են իրենց վարչության կողմից մշակված եւ հաստատված ուսումնական ծրագրերով:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ